# ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՅՈՒՍԻՍ-ԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ /ՆԱՏՕ/ ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՄԲ ԿՆՔՎՈՂ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 1 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված՝ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսատլանտյան դաշինքի /ՆԱՏՕ/ հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրում

ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 23.11.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Խնդրո առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հոկտեմբերի 19-ի՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի նամակի եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված պատասխան նամակի փոխանակման միջոցով:

Համաձայնագրի նպատակն է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող Անվտանգության աջակցության միջազգային ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված իրավական հարցերի կարգավորումը:

2. Համաձայնագրի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ Աֆղանստանի վերականգնման ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2001թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1386 բանաձեւի համաձայն ստեղծվել են Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժեր: Վերջիններիս առաքելության հիմնական նպատակն է աջակցել Աֆղանստանի ժամանակավոր վարչակազմին անվտանգության պահպանման գործում:

Նշված ուժերի գործունեության ժամկետը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հետագա բանաձեւերով քանիցս երկարաձգվել է, իսկ վերջին՝ 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1890 բանաձեւով՝ եւս մեկ տարով: Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի ղեկավարությունն ստանձնել է ՆԱՏՕ-ն: Ներկայումս նշված ուժերի թվաքանակը կազմում է 50 000, որում ընդգրկված են 42 պետությունների զինված ուժերի ներկայացուցիչներ, այդ թվում ՆԱՏՕ-ի անդամ բոլոր 28 պետությունները:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումները 2004 թվականից ի վեր մասնակցել են Իրաքում եւ Կոսովոյում իրականացվող խաղաղապահ առաքելություններին:

3. Համաձայնագրից բխում է, որ նախնական քննարկումների արդյունքում համաձայնություն է կայացվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 35-40 զինծառայողից բաղկացած ստորաբաժանումն ընդգրկել Աֆղանստանի Կունդուզ նահանգի՝ Գերմանիայի հրամանատարության ներքո գտնվող Նահանգային վերականգնողական խմբում: Աֆղանստանի տարածքում հերթափոխի ժամանակ հայկական զորախմբի առավելագույն թվաքանակը կարող է հասնել 80 զինծառայողի: Հայկական զորախմբի գլխավոր առաքելությունը պետք է լինի Աֆղանստանի Կունդուզ քաղաքի օդանավակայանի թռիչքադաշտի, շինությունների պահպանությունը:

Հայկական զորախումբն իր առաքելությունն սկսելու է իրականացնել 2010թ. առաջին եռամսյակից՝ մեկ տարի ժամկետով, փոխադարձ համաձայնությամբ մասնակցության հետագա երկարաձգման հնարավորությամբ:

Հայկական կողմը պարտավորվում է իր զորախումբը դուրս չհանել առանց աջակցման ուժերի հրամանատարին նախապես՝ առնվազն երեք ամիս առաջ ծանուցելու, եթե այլ համաձայնություն ձեռք չբերվի:

Հայկական զորախմբի հրամանատարությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ անձնակազմի կողմից պատշաճ կարգապահության պահպանումն ապահովելու համար եւ քննության առարկա դարձնել զինծառայողների կողմից իրավախախտման յուրաքանչյուր դեպք:

Համաձայնագիրը սահմանում է հայկական զորախմբի եւ աջակցման ուժերի հրամանատարության միջեւ փոխհամագործակցության կարգը եւ պայմանները:

Ազգային զորախմբերը կօգտագործվեն դրանց կարողություններին ներդաշնակ՝ հաշվի առնելով զորախմբի հրամանատարի խորհուրդը:

Հայկական կողմը համաձայնում է ղեկավարվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձեւերում եւ ՆԱՏՕ-ի գործողությունների պլանավորման փաստաթղթերում ամրագրված սկզբունքներով:

Համաձայնագիրն արձանագրում է, որ ՆԱՏՕ-ի եւ ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող երկրների միջեւ գաղտնի տեղեկատվության փոխանակումը կիրականացվի բոլոր մասնակից պետությունների կողմից գործադրվելիք անվտանգության համապատասխան միջոցառումների համաձայն:

Համաձայնագրից բխում է նաեւ, որ համապատասխան զինված ուժեր պրամադրող պետությունները քաղաքական բնույթի հարցերի պարագայում կարող են դիմել ՆԱՏO-ի Գլխավոր քարտուղարին:

Ըստ համաձայնագրի՝ դրանում չհիշատակված ցանկացած այլ խնդիր մնում է Հայաստանի Հանրապետության պատասխանատվության ներքո եւ չի ենթադրում որեւէ ֆինանսական պարտավորություն ՆԱՏO-ի եւ աջակցման ուժերի ազգային բաղադրիչներից որեւէ մեկի կողմից: Այլ խոսքով՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կատարել համաձայնագրով չնախատեսված, սակայն դրա գործողության ընթացքում առաջացած ծախսերի ֆինանսավորումը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ներպետական բոլոր ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության կողմից ավարտելու մասին ծանուցումը ՆԱՏO-ի կողմից ստանալու օրվանից:

4. Միջազգային անվտանգության ապահովման արդի համակարգում բոլոր պետությունների անվտանգության խնդիրները փոխկապակցված են, եւ Հայաստանի Հանրապետությունը եւս պարտավոր է ՄԱԿ-ի կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունների շրջանակներում իր ներդրումն ունենալ միջազգային անվտանգության ապահովմանն ուղղված առաքելություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված՝ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսատլանտյան դաշինքի /ՆԱՏO/ հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ- 840